

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1791-Ն որոշման
մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 1791-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ոստիկանության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 3-րդ, 6-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1791-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետում լվայրն է՝ քաղ. Երևան, լ բառերը փոխարինել լվայրն է՝ **Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, լ բառերով,**

2) **8-րդ կետում՝**

ա. լղ. լ ենթակետը լպատրաստումը» բառից հետո լրացնել լև վերապատրաստումը» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետեր՝

ղգ) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան

համակարգի ներդրումը.

Է) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

ը) սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

թ) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

ժ) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:[]

3) 10-րդ կետի []բ[] ենթակետում []ուսումնական պրակտիկայի[] բառերը փոխարինել []պրակտիկայի[] բառով,

4) **11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

[]11. Կրթահամալիրի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, []Ոստիկանությունում ծառայության մասին», []Ոստիկանության մասին[], **«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»**, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», []Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին[] օրենքներին, այլ օրենքներին և իրավական ակտերին, սույն կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամաններին համապատասխան:»,

5) **18-րդ կետում՝**

ա. []Ժդ[] ենթակետում []Գոյացած արտաբյուջետային[] բառերը փոխարինել []ձեռնարկատիրական գործունեությունից ստացված[] բառերով,

բ. «Ժե» ենթակետում «արտաբյուջետային[] բառը փոխարինել []ձեռնարկատիրական գործունեությունից ստացված[] բառերով,

6) 21-րդ կետի []թ[] ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

[]թ) լսում և գնահատում է Կրթահամալիրի գործունեության տարեկան հաշվետվությունը:[]

7) 22.2-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը,

8) 22.3-րդ կետից հանել 3-րդ նախադասությունը,

9) 43-րդ կետում՝

ա. Ըբ Ենթակետում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» բառերով, իսկ «իրավունքներից» բառից հետո լրացնել «(բացառությամբ վճարովի հիմունքներով սովորողների)»:

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետեր՝

Ըթ) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի անվանական կրթաթոշակ.

ժ) ծանոթանալու սույն կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր Կրթահամալիրի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

ժա) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

ժբ) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կրթահամալիրի կողմից սահմանված կարգով.

ժգ) վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10) 44-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետերով՝

Ըե) բարձր պահել Կրթահամալիրի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը.

զ) վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում պայմանագրում նշված ժամկետում վճարել ուսման վարձավճարը: Ուսման վարձավճարը պայմանագրում նշված ժամկետում չվճարելու դեպքում այդ սովորողները ազատվում են Կրթահամալիրից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՎԱՐՉԱՊԵՏ
ՓԱՇԻՆՅԱՆ**

Ն.

« » _____ 2020

Թ.

ք.Երևան